

գտնելու համար, կարելու էր բան մը, հիմա ալ կը պահպանեն, որովհետեւ իմ փորածս է միակ բանը որ իմս է, իմ ստեղծածս: Միակ բանը, ա՛յ, այդ փոսը, այդ դատարկ փոսը, այդ միշտ դատարկ փոսը, որ ինչքան փորես այնքան աւելի դատարկ կը դառնա: Դատարճ, դատարճ, կը հասկնամ, որ երբէ՛ք, երբէ՛ք չէ լեցուելու, ոչինչով: Գնա՛ դուն ալ. գնա փորէ քու փոսդ ու թող իմինս ինծի»:

Քիչ մը անդին կը հասկցուի որ այս ճգնաւորը եկեր է կեանքի գլխաւոր հանգրուաններէն. եղեր է իշխող, յետոյ քարոզիչ, յետոյ միաբան, եւ ի՞նչ թշուառ եզրակացութեան կը յանգի ի վերջոյ...

Կեանքը՝ զգացման թէ մտածման, ուրիշ բան չէ եթէ ոչ պատրաստութիւն մը անյոյս վախճանի մը: Եւ եթէ այդ փոսը սիրոյ կամ կեանքի երագովն իսկ լեցուի, մենք կանգնած ենք կրկին այդ անյուսութեան անդունդին վրայ...

Ահա Շանթին կեանքի մասին ունեցած ըմբռնումը: Ճիշտ է թէ սխալ, ամէն մարդ զայն իր հաւատքին համեմատ կրնայ քննութեան ենթարկել եւ դատել. միայն թէ մի մոռնաք, ազնիւ ունկնդիրներ, որ հոս գեղարուեստական գործի մը առջեւ կը գտնուինք եւ ոչ թէ ընկերային բարոյականութեամբ զբաղող երկասիրութեան մը...

Արշ. Յարութիւնեան, մին Շանթի դատական գործի քննադատներէն, *Հին աստածները* անարժէք, անիմաստ եւ վնասակար կը գտնէ, որովհետեւ հոն tendance²⁴ չիկայ, որովհետեւ հեղինակը սանձարձակ կենսապայքար կը քարոզէ, որովհետեւ կը մերժէ բարոյական մեծ յաղթանակներուն տանող իտէալը²⁵: Այս տեսակէտները ինքնին կը չքանան իմ հայեցակէտէս նայելով գործին:

Ի՞նչ կը նշանակէ արուեստի գործին մէջ անպատճառ փնտռել այն գոր դնել չէ փափագեր հեղինակը: Արուեստի գործը պիտի դատուի ինքն իր մէջ, չէ թէ մեր ձգտումներուն, հաւատամքին համեմատ: Այդպէս դատելով մարդկային մտքին է՛ն շքեղ արտադրութեանց մեծագոյն մասը կը փճանան: Դատեցէք այդպէս, եթէ կրնաք, Սօֆօքլի *Էօսիփը*²⁶, որ ահեղ ճակատագրականութեամբ հորը